ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 328-Ա

24 Օգոստոս 2026թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 94 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Նախադպրոցական կրթության մասին>> օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի հանրակրթական դպրոցների կանոնադրությունները հաստատելու և Արարատի մարզպետի 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 124 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 94 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ռանչպարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 15-րդ կետի
   - ա/ ենթակետում <<5-ից մինչև 6 տարեկան հասակը>> բառերը փոխել <<4-6 տարեկան հասակը>> բառերով.
   - բ/ ենթակետում <<3-ից մինչև 5 տարեկան հասակը>> բառերը փոխել <<3-6 տարեկան հասակը>> բառերով.

2. Հաստատել << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ռանչպարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:
3. Հանձնարարել դպրոցի տնօրենին՝ ռեգիստրում իրականացնել կատարված փոփոխության պետական գրանցումը:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ